Երկու դար անցել էր Արծրունեաց թագաւորութեան հիմնելուց յետոյ, մէկ դար անցել էր Արծրունեաց թագաւորութեան վերջանալուց յետոյ, երբ Աղթամարը մի հակաթոռ արքունիքից դարձաւ մի արքեպիսկոպոսի հակաթոռ կաթողիկոսարան: Պատերազմների համար զինորոած կղզին աբեղայի սքեմ զգեցաւ: Գագիկը, ապստամբելով Բագրատունիների դէմ, այստեղ թագաւորութիւն հիմնեց, իսկ Դաւիթը, ապստամբելով Կիլիկիայի վեհարանի դէմ, այստեղ կաթողիկոսութիւն հիմնեց: Առաջինը ոչնչացաւ, իսկ երկրորդը մնաց:

Աղթամարը տրամադրում է դէպի ապստամբութիւն: Նրա ծովը, շրջակայ լեռները եւ անտառները ազատութիւն են սիրում:

Աղթամարայ տաճարի մէջն էին պահւում ս. Գրիգոր Լուսաւորչի սրբութեան սեղանը, նրա հայրապետական քօղն ու գաւազանը եւ նրա մաշկեղէն գօտին: Աղթամարայ տաճարի մէջն էր պահւում եւ նրա սուրբ աջը: Այստեղ էր գտնւում նաեւ ս. Հռիփսիմէ կոյսի հողաթափների մի հատը եւ նրա գլխի շղարշը:

Այն աղէտալի ժամանակներում, երբ հայոց կաթողիկոսարանները, թէ Կիլիկիայում եւ թէ Արարատեան նահանգում, օտարազգի իշխանների ձեռքում վաճառքի նիւթ էին դարձել, Աղթամարայ արքեպիսկոպոս Դաւիթը, իր կողմը գրաւելով տեղային իշխանին եւ հինգ եպիսկոպոսներ, նրանց ձեռքով կաթողիկոս ձեռնադրոեցաւ: Նա գրաւեց եւ իր թիմի ժողովրդի մոլեռանդութիւնը, այն առարկութեամբ, թէ վերոյիշեալ սրբութիւնները նրա վանքումն են գտնւում, եւ այդ պատճառով նրան է վայելում կաթողիկոսութիւնը: Թէեւ Կիլիկիայի այդ ժամանակոայ մանկահասակ, բայց շնորհալի կաթողիկոսը, քսանամեայ Գրիգոր Պահլաւունին, կազմեց Սեաւ լեռան ժողովը, որ բաղկացած էր երկու հազար եւ հինգ հարիւր հոգեւորականներից, որոնք միաձայն Աղթամարայ կաթողիկոսութեանը նզովքի տակ դրին եւ այնտեղ պահոած սրբութիւնները օգնեցին Դաւթին մնալ իբրեւ կաթողիկոս, եւ նրա հիմնած կաթողիկոսութիւնը տեւոեց մինչեւ մեր օրերը:

Ոչ մի հնարքով չկարողացան ոչնչացնել այդ կաթողիկոսութիւնը: Մինչեւ անգամ ս. Գրիգոր Լուսաւորչի աջը, նրա գաւազանը, նրա հայրապետական քօղը Աղթամարայ վանքից գողանալ տոին եւ Կիլիկիա տարան, որ թուլացնեն տեղային կաթողիկոսի զօրութիւնը, բայց այդ եւս չօգնեց:

Ես բոլորովին այլ կարծիք ունէի Աղթամարայ մասին: Այդ վանքը գալու ժամանակ՝ ես միշտ երեւակայում էի, թէ պիտի տեսնեմ Կտուց անապատի երկրորդ օրինակը, մի վանք, որտեղ աշխարհից անջատոած աբեղաները անձնատուր են եղած միմիայն ճգնութեան եւ աղօթքի: Այդ էր պատճառը,